ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝

Ինստիտուտի տնօրեն Արամյան Ժ.Բ.

, ե 2024 թ.

Ինստիտուտ՝ Տնտեսագիտության և բիզնեսի

Ամբիոն՝ Տնտեսագիտության և ֆինանսների

Հեղինակ՝ տ.գ.դ., պրոֆ. Թ.Շ.Թորոսյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Միջազգային տնտեսագիտություն

Բակալավրի կրթական ծրագիր՝0412 Ֆինանսներ

Դասիչ մասնագիտություն՝ 041201.00.6 Տնտեսագիտության բակալավր

Դասընթացի անոտացիան

<<Միջազգային տնտեսագիտություն>> դասընթացը ուսանողներին ծանոթացնում է միջազգային առևտրի հիմունքներին, տարրական գիտելիքներ է տալիս համաշխարհային առևտրի զարգացման միտումների և հիմնական ուղղությունների մասին: Դասընթացը ընդգրկում է իր մեջ միջազգային առևտուրին վերաբերվող հարցեր :

Դասընթացը ներկայացնում է նաև համաշխարհային ֆինանսների հիմունքները, տրամադրում է հիմնական գիտելիքներ միջազգային ֆինասների վերաբերյալ: Առարկան ապահովում է կապիտալի համաշխարհային շուկայի և միջազգային վարկի մասին պատկերացում: Դիտարկվում է միջազգային արժութային համակարգը, փոխարժեքը և դրա հիմնական տեսակները, ինչպես նաև փոխարժեքի կարգավորման հարցեր:

Դասընթացի նպատակը և խնդիրները

Դասընթացի հիմնական նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել միջազգային տնտեսական հարաբերությունների, միջազգային առևտրի, միջազգային ֆինանսների և արտաքին տնտեսական հատվածում ծագող տեսական և գործնական խնդիրներին:

Դասընթացի դասավանդման խնդիրներն են՝

• արտաքին տնտեսական հարաբերությունների և արտաքին առևտրի ոլորտում տնտեսական վերլուծության հմտությունների ձևավորում և համախմբում

• ծանոթացում միջազգային առևտրի տարբեր հայեցակարգային մեկնաբանություններին

. միջազգային առևտրի կարգավորման ոլորտում գիտելիքների տրամադրում

• արտաքին առևտրի հիմնական և հատուկ ձևերի ուսումնասիրություն

• արտաքին առևտրի գործունեությունը սպասարկող և ապահովող ոլորտների դիտարկում

• միջազգային ֆինանսական հարաբերությունների ոլորտում նոր և խորացող գիտելիքների ձեռքբերում.
• արտաքին ֆինանսական հատվածի տնտեսական վերլուծության հմտությունների ձևավորում և համախմբում
• միջազգային արժութային համակարգի ներկայացում և փոխարժեքի կարգավորման մեթոդների ուսումնասիրություն
• միջազգային ֆինանսական կապիտալի շարժի արտացոլում
• միջազգային վարկի դերի բացահայտում:

Դասընթացի շրջանակներում լուծվում են հետևյալ խդիրները.

< <Միջազգային տնտեսագիտություն>> առարկան ավարտելուց հետո ուսանողները գիտելիքներ կունենան միջազգային տնտեսական ոլորտի, մասնավորապես՝ արտաքին առևտրի կարգավորման, արտաքին առևտրի գործունեության կազմակերպման, միջազգային ֆինանսական հոսքերի օրինաչափությունների բացահայտման, տոկոսադրույքի և միջազգային վարկավորման վերաբերյալ:

Դասընթացի օբյեկտը և առարկան

Դասընթացի օբյեկտն է միջազգային տնտեսական համակարգը իր համալիր դրսևորումներով, որոնք անհրաժեշտ են երկրների միջև արտաքին տնտեսական հարաբերություններ իրականացման համար:

Դասընթացի առարկան իր մեջ ընգրկում է միջազգային առևտուրը և միջազգային ֆինասները, որոնք միասին ձևավորում են միջազգային տնտեսագիտությունը :

Դասընթացի մուտքային պահանջները

< <Միջազգային տնտեսագիտություն>> դասընթացի հաջող ուսումնասիրությունը ենթադրում է < <Մակրոտնտեսագիտության>> և < <Միկրոտնտեսագիտության >> դասընթացների յուրացման արդյունքում ձեռք բերված գիտելիքներ:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխան ՈԱԾ-ի վերջնարդյունքներին:

Գիտելիքները՝

1. Ուսանողները կտիրապետեն միջազգային առևտրի կազմակերպման և իրականացման գիտելիքների:
2. Ուսանողները կունենան գիտելիքներ միջազգային ֆինանսների համակարգի վերաբերյալ :

Հմտությունները՝

- ***գիտելիքի կիրառման հմտությունները՝***

1. Ստացված գիտելիքները ուսանողները կարող են կիրառել արտաքին առևտրի սպասարկման գործընթացում:
2. Դասընթացի ավարտին ուսանողները գործնականորեն կողմնորոշվել միջազգային առևտրային և ֆինանասական համակարգում :

- ***ընդհանրական իմացական հմտությունները՝***

1. Ուսանողները ձեռք կբերեն հմտություններ արտաքին տնտեսական կապերը իրականացնելու համար :
2. Դասընթացը ավարտողները կկարողանանա արագ տրամաբանել և վերլուծել արտաքին տնտեսական համակարգին վերաբերվող հարցեր:

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

- ***ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝***

1. Ուսանողները կկարողանան ինքնուրույն կայացնել որոշումներ :
2. Աշխատանքային գործունեությունը իրականացնելիս իր վրա վերցնել պատասխանատվություն :

Դասավանդման եղանակները և մեթոդները

Դասավանդման ընթացքում կկիրառվեն հարց ու պատասխանի, բանավեճային և ցուցադրական տարբեր եղանակներ : Լայնորեն կօգտագործվեն համեմատություններ ելնելով միջազգային փորձից: Դասընթացը իր մեջ ընդգրկելու է գծապատկերային և որոշ մաթեմատիկական մեթոդներ:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է ,..6.ե՝ .. ակադեմիական կրեդիտ (...102 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից ..34. ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 2024-2025…. ուսումնական տարվա ..1 . կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	Ընդամենը, ակադ. ժամեր

1.Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝		
1.1.Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	102	
1.1.1. Դասախոսություններ	68	
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	34	
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	10.4	
1.2.Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝		
1.2.1. Քննություններին նախապատրաստում		
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝(նշել)		
1.2.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ		
1.2.2.2. Էսսե և ռեֆերատներ		
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	Քննություն 5.2	

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը	Դասախոսու-թյուններ	Գործնական / սեմինար պարապմունքներ
1	2=3+4	3	4
Թեմա 1. Միջազգային առևտրի հիմունքներ	8	6	2
Թեմա 2. Միջազգային առևտրի կարգավորման մեթոդներ	10	6	4

Отформатированная таблица

Թեմա 3. Արտաքին առևտրի կարգավորման գնահատում	6	4	2
Թեմա 4. Հավասարակշռությունը միջազգային առևտրում	6	4	2
Թեմա 5. Միջազգային առեւտրի դրսևորման ձեւերը	6	4	2
Թեմա 6 Միջազգային պայմանագրեր և միջազգային առևտրի կազմակերպման ձևեր	8	6	2
Թեմա 7 Արտաքին տնտեսական կապերի տրասպորտային սպասարկում և ապահովագրություն	**10**	6	**4**
Բաժին 2. Միջազգային ֆինանսներ			
Թեմա 1 Միջազգային ֆինանսների հիմունքներ **Թեմա 2** Միջազգային ֆինանսական շուկա	**6**	4	**2**

	6	4	**2**
Թեմա 3 Արժույթը համաշխարհային տնտեսության մեջ	**6**	4	**2**
Թեմա 4 Միջազգային արժութային համակարգ	**8**	6	**2**
Թեմա 5 Փոխարժեքը և դրա կարգավորումը	**10**	6	**4**
Թեմա 6 Միջազգային ֆինանսական կապիտալ	**6**	4	**2**
Թեմա 7 Միջազգային վարկ	**6**	4	**2**
Ընդամենը	**102**	**68**	**34**

Դասընթացի թեմաների բովանդակությունը

Թեմա 1. Միջազգային առևտրի հիմունքները.

Միջազգային առևտրի հիմնական տեսություններ:. Մերկանտիլիզմ: Ա.Սմիթի < <Բացարձակ առավելության> տեսությունը : Դ.Ռիկարդոյի <<Համեմատական առավելության>> տեսությունը: <<Արտադրության գործոնների հարաբերակցության> > Հեքշեր—Օհլինի տեսությունը: Լեոնտեւի պարադոքս:. Մ.Պորտերի <<Մրցակցային առավելությունների>> տեսությունը : Համեմատական առավելության սկզբունքը և դրա կիրառումը միջազգային առևտրում.:Փոխակերպման սահմանային նորմը: Միջազգային մասնագիտացում: Միջազգային տնտեսական համագործակցություն:

Թեմա 2. Միջազգային առևտրի կարգավորման մեթոդներ

Արտաքին առևտրի կարգավորման սակագնային մեթոդներ. Մաքսատուրքերը և դրանց դասակարգումը. Արտաքին առևտրի կարգավորման ոչ սակագնային մեթոդներ. Սակագներ և քանակական սահմանափակումներ:

Թեմա 3.Արտաքին առևտրի կարգավորման գնահատում

Ազատ առևտուր, հովանավորչություն, դեմպինգ:. Ներմուծման և արտահանման դեպքում մաքսատուրքերի կիրառման սոցիալ-տնտեսական հետևանքները մեծ և փոքր երկրի օրինակով Միջազգային տնտեսական ինտեգրումը և դրա հետևանքները :Առևտրային և վճարային հաշվեկշիռ:

Թեմա 4 Հավասարակշռություն միջազգային առևտրում

Համաշխարհային շուկայում միջազգային գների ձևավորումը: Երկրների զարգացումը: Արտաքին առևտրի բացակայության և առկայության պայմաններում.

Փոխանակման կորեր միջազգային առևտրում: Արտահանման, ներմուծման և տնտեսական աճի փոխկապվածությունը :

Թեմա 5 Միջազգային առեւտրի դրսեւորման ձեւերը

Նյութական ռեսուրսների դերը և դրանց ազդեցությունը միջազգային առևտրի վրա:Արտոնագրությունների միջազգային առևտրի էությունն ու նշանակությունը: Ինժինիրինգային ծառայությունների միջազգային առևտուր: Աշխատանքային ռեսուրսների դերը միջազգային առևտրում:

Թեմա 6 Միջազգային պայմանագրեր և միջազգային առևտրի կազմակերպման ձևեր

Առք ու վաճառքի առևտրային պայմանագրի բովանդակությունը և կառուցվածքը: Կապալային պայմանագրերի առանձնահատկությունները:Վարձակալության պայմանագրերի էությունը և տեսակները.:Առևտրային միջնորդական պայմանագրերի հիմնական տեսակները:Միջազգային աճուրդային առևտուր և սակարգություններ:. Միջազգային բորսայական առևտուր:

Թեմա 7 Արտաքին տնտեսական կապերի տրասպորտային սպասարկում և ապահովագրություն

Միջազգային տրանսպորտի ձևերը: Ապրանքների առաքման բազիսային պայմանները : Տրանսպորտային ծառայությունների կազմակերպումը: Ապահովագրության ձևերը:. Արտաքին տնտեսական գործունեության ապահովագրության առանձնահատկությունները:

Բաժին 2. Միջազգային ֆինանսներ

Թեմա 1. Միջազգային ֆինանսների հիմունքներ

Միջազգային ֆինանսների էությունը ու նշանակությունը: Նրա տեղն ու դերը միջազգային տնտեսական համակարգում:Միջազգային ֆինանսներ և միջազգային առևտուր:

Թեմա 2. Միջազգային ֆինանսական շուկա

Փողի պահանջարկի և առաջարկի որոշումը, դրանց վրա ազդող գործոնները: Փողի հավասարակշռությունը միջազգային շուկայում:Գնաճ, գնանկում, լճացում:

Թեմա 3. Արժույթը համաշխարհային տնտեսությունում

Արժույթի ձևավորման պատմական նախադրյալները, դրա զարգացման հիմնական օրինաչափությունները:. Փոխանակման հավասարումը և դրա դրսևորումները:

Թեմա 4. Միջազգային արժութային համակարգ

Արժույթի հայեցակարգ: Արտարժույթի փոխարկելիություն: Պահուստային արժույթները. Արտարժույթի զամբյուղ:Արժույթի բաղադրություն:

Թեմա 5. Փոխարժեքը և դրա կարգավորումը

Փոխարժեքը և դրա տեսակները: Ֆիքսված և լողացող փոխարժեք: Չկարգավորվող լողացող և կարգավորվող լողացող փոխարժեք: Առևտրային հաշվեկշռի ազդեցությունը փոխարժեքի վրա: Փոխարժեք և վճարային հաշվեկշիռ: Փոխարժեքի կարգավորման հիմնական մեթոդները: Արժութային քաղաքականություններ:

Թեմա 6. Միջազգային ֆինանսական կապիտալ

Միջազգային կապիտալի միգրացիա: Կապիտալի արտահանման հիմնական ձևերը. Ձեռնարկատիրական և փոխատվական կապիտալ: Օտարերկրյա ուղղակի ներդրումներ և օտարերկրյա պորտֆելային ներդրումներ: Միջազգային ֆինանսական կենտրոններ:

Թեմա 7. Միջազգային վարկ

Միջազգային վարկը և դրա դերը համաշխարհային տնտեսության մեջ:Միջազգային վարկերի դասակարգում: Միջազգային վճարումների հիմնական ձևերը:Միջազգային վարկավորման սկզբունքներն ու պայմանները:

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

2. Теоретический блок

1. Թ. Թորոսյան, Միջազգային տնտեսագիտություն /միջանկյալ մակարդակ/, Ե., 2009:
2. П. Р. Кругман, М. Обсфельд, Международная экономика. Теория и политика, 2004.
3. Сальвадор Доменик, Международная экономика, М.1998.
4. П. Х. Линдерт,Т.Л.Пугель, Международная экономика,М.,2003.,
5. Paul R. Krugman, Maurice Obstfeld, International Economics: Theory and Policy, 9th edition, 2012.,
6. Steven Husted, Michael Melvin, International Economics.9th edition,2013.,
7. Robert Carbaugh, International Economics, 13th edition, 2011.,
8. Beth V. Yarbrough, Robert M. Yarbrough, The World Economy: Trade and Finance, 7th edition, 2005.

3. Практический блок

1. Թ. Թորոսյան, Միջազգային տնտեսագիտություն, Ե., ԱՌՏ, 2003:

2. Թ. Թորոսյան, Միջազգային տնտեսագիտություն. առևտուր և ֆինանսներ, edition, 2005.
3. Robert Carbaugh, International Economics, 11th edition, 2006.
4. Paul R. Krugman, Maurice Obstfeld, International Economics: Theory and Policy, 7th edition, 2006.
5. П. Х. Линдерт, Экономика мирохозяйственных связей, М. Прогресс 1992.
6. Dominick Salvatore, International Economics, 9th edition, 2007.